# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

## «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/7» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի

ք. Երևան 23 նոյեմբերի 2016թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավոյան, Է. Եղոյան, Վ. Համբարյան, Ա. Մարկոսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

**Օրակարգ**
**հայտերի բացման և գնահատման նիստի մասին**

1. **Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/7» ծածկագրով մրցույթի հայտերի բացման մասին.**

«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/7» ծածկագրով մրցույթի հայտերը փաստաթղթային ձևով բացվել են հայտարարության և հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 7-րդ աշխատանքային օրը՝ **2016 թվականի նոյեմբերի 23-ին, ժամը 11:00-ին,** ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

2. **Տեղեկություն «ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/7» ծածկագրով մրցույթի գնման առարկայի միակ չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գնի վերաբերյալ**

**Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի /Այսուհետ Կարգ/ 44-րդ կետի առաջին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկայի յուրաքանչյուր չափաբաժնի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.**

| Չ/հ | Աշխատանքի անվանումը | Աշխատանքի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | ՀԱԷԿ 2-րդ էներգաբլոկի համակարգի համալիր վերլուծություն և անվտանգության գնահատում | 7800000 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

3. **Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները.**

| Հ/հ | Մասնակցների անվանումները | Գտնվելու վայրը | Հեռախոսահամարը |
|---|---|---|---|
| 1 | «Էնջինիրինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ | ՀՀ, ք. Երևան, Ն. Շենգավիթ 11փ. 37/3-28, | 093 353 67 97 |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

4. **Տեղեկություն հայտեր պարունակող ծրարներ կազմման և ներկայացման համապատասխանության մասին.**

**«Էնջինիրինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտեր պարունակող ծրարները կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

5. **Տեղեկություն յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.**

**«Էնջինիրինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտերը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմվել են հրավերի պահանջների համապատասխան:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

6. **Տեղեկություն մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին**

(ՀՀ դրամ)

| Հ/հ | Մասնակցների անվանումները | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Առաջարկված Ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|---|
| 1 | «Էնջինիրինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ | **6545450** | **654550** | - | **7200000** |

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

**Հանձնաժողովը որոշեց.**

1. **Ընթացակարգի միակ չափաբաժնի առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Էնջինիրինգ օֆ սեյֆթի» ՍՊԸ-ին, որպես ընթացակարգի բավարար գնահատված հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած միակ մասնակցի:**

2. **Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:**

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0:**

7. **Տեղեկություն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում կատարելու վերաբերյալ.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

8. **Տեղեկություն հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ.**

«ՀԱ-ՊԸԱՇՁԲ-16/7» ծածկագրով մրցույթի մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել Կարգի 49-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան փաստաթղթերը գնահատող հանձնաժողովի անդամներին փոխանցելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ **2016 թվականի նոյեմբերի 30-ին, ժամը 11:00-ին**, ք. Երևան, Ծովակալ Իսակովի 50 հասցեում «Հայատոմ» ՓԲԸ-ի ճարտարագիտական մասնաշենքի 1004 սենյակում:

**Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0**

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Հ. Սաքեյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Ավոյան

Է. Եղոյան

Վ. Համբարյան

Ա. Մարկոսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Տ. Մարգարյան

sossargsyan@yahoo.com